

ՍԱՂՄՈՍ 114

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Եգիպտոսից Իսրայելի ազատագրումը Աստծո կողմից	Աստծո զորությունը Իսրայելին փրկելու մեջ	Ազգ ստեղծելու մեջ Աստծո մեծ զորների մասին փառաբա- նության երգ	Սիրո երգ	Չասոկի երգ
<u>MT ներածություն</u> <u>չկա</u>				
114:1-2	114:1-2	114:1-2	114:1-2	114:1ա 114:1բ-2
114:3-6	114:3-6	114:3-4 114:5-6	114:3-4 114:5-6	114:3-4 114:5-6
114:7-8	114:7-8	114:7-8	114:7-8	114:7-8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 114:1-2
¹Երբ Իսրայելը դուրս եկավ Եգիպտոսից,
 Հակոբի տունը՝ օտարալեզու ժողովրդի միջից,
²Հուդան Նրա սրբարանն էր, իսկ Իսրայելը՝
 Նրա իշխանությունը:

114:1-2 Այս Սաղմոսը Եգիպտոսից ելքի մասին է (տես՝ Ելից 1-12): Ելիցը ՅԱՀՎԵԻ հայտնության և Ծննդ. 15:12-21-ում Աբրահամին տված խոստման ուղղակի իրականացումն է: Ելիցը Աստծո Ժողովրդի որպես ազգ ձևավորման սկիզբն էր (տես՝ Ելից 19-20):

- Նկատել՝ Աստծո ժողովրդի համար տարբեր անվանումները՝
1. Իսրայել
 2. Հակոբի տուն
 3. Հուդա

114:1 «Իսրայել» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼ (անունը)

❖ «**օտարալեզու ժողովրդի միջից**» Այս արտահայտությունը հանդիպում է ՀԿ-ում միայն այստեղ: AB (էջ՝ 134) վերցնում է նույն բաղաձայնները և դրանցից նոր բառ ստեղծում, որը համապատասխանում է Եսայի 25:3-ում նկարագրությանը, որտեղ այն մատնանշում է «ղաժան ժողովրդի» (BDB 470, այսինքն՝ իսրայելացիների վարպետները, տես՝ Ելից 3:7): Նույն արմատը կիրառվում է ընդգծված *lamed* (այսինքն՝ երբայերենի L տառը) տառով՝ Ողբ 4:3-ում:

Իսրայելի պատմական իրողությունը օտար գերիշխողների հետ կապված, պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Եսայի 28:22, 33:19, Երեմ. 5:15): Մեկնաբանության հարցն այն է, թե ինչպես և ինչու են Աստծո ժողովրդին իշխել հեթանոսները (տես՝ Ամբակում): Ինչպես որ Աստված քանանացիների ցեղերին հեռացրեց երկրից իրենց մեղքի պատճառով, այնպես էլ իսրայելացիներին՝ իրենց մեղքի պատճառով (այսինքն՝ Ասորեստանի և Բաբելոնի կողմից գերեվարումը):

114:2 Քանի որ նշվում են թե՛ Իսրայելը և թե՛ Հուդան, հարց է առաջանում, թե երբ է գրվել այս Սաղմոսը:

1. Միացյալ Միապետությունը տևել է Սավուդից մինչև Սողոմոնի թագավորությունը:
2. Ք. Ա. 922թ-ին Թագավորությունը բաժանվում է՝
 - ա. Հուդայում Ռեբովամ թագավորի
 - բ. Իսրայելում՝ Հերոբովամ I-ի միջև
 - գ. Կյուրոս Բ-ի օրոք պարսկական գերությունից վերադառնալուց հետո, իսրայելացիները նորից վերականգնեցին իրենց հավաքական անունը, չնայած որ տիրում էին միայն Հուդայի տեղանքում գտնվող մի փոքր մասին (այսինքն՝ Երուսաղեմի շուրջը գտնվող մի փոքր շրջան)

❖ **NASB, NKJV, NRSV, REB, NJB, Peshitta** «Նրա սրբարանը»
TEV «Տիրոջ սուրբ ժողովուրդը»
LXX «նրա սուրբ տեղամասը»
JPSOA «Նրա սուրբը»

- Սա վերաբերում է՝
1. Մորիա լեռան վրա Երուսաղեմում գտնվող տաճարին
 2. Քանանի ամբողջ երկրին՝ որպես ՅԱՀՎԵԻ հատուկ սեփականություն
 3. ՅԱՀՎԵԻ ժողովրդին (տես՝ Ելից 19:5-6)

- ❖ «**Նրա իշխանությունը**» Այս տերմինը (BDB 606) ունի երկու իմաստ:
1. ՅԱՀՎԵԻ տիեզերական տիրակալությունը՝ իշխանությունը, Սաղմ. 103:22, 145:13 (տես՝ Հեսու 3, 11, 13, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)
 2. Քանանը որպես ՅԱՀՎԵԻ յուրահատուկ սեփականություն (այսինքն՝ Խոստացյալ Երկիրը, տես՝ Ելից 15:17):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 114:3-6

³Ծովը տեսավ ու փախավ:
 Հորդանանը ետ քաշվեց:
⁴Լեռները խոյերի պես ցատկոտեցին,
 Իսկ բլուրները՝ գառնուկների պես:
⁵Քեզ ի՞նչ եղավ, ո՞վ ծով, որ փախար,
 Եվ դո՛ւ Հորդանան, որ ետ դարձար:
⁶Ո՞վ լեռներ, ինչո՞ւ խոյերի պես ցատկոտեցիք,
 Ու դուք՝ բլուրներ՝ գառնուկների պես:

114:3-6 Սա փոխաբերական լեզու է (տես՝ Սաղմ. 18:7-15, 29:3-9, 68:7-8, 77:16-19): Երկու գրքեր, որոնք օգնել են ինձ ամենաշատը ՀԿ-յան այլաբանության և պատկերների վերաբերյալ՝

1. Դ. Բրենթ Սենդի, *Գույթաններ և մաներ. սուրբգրային մարգարեական և սպոկալիպտիկ լեզվի վերանայում*
2. Գ. Բ. Քայրդ *Աստվածաշնչի լեզուն և պատկերները*

Հետաքրքիր է, որ «ջուրը» նշված է մի քանի իմաստով: Չորը միակ բանն է, որը Ծննդոց 1-ում հատուկ չի ասվում, որ ստեղծվել է: Չորը ՀՄԱ առասպելաբանության մեջ համարվում է աստվածային (այսինքն՝ աղի ջուրը, թարմ ջուրը): Ընդհարում կար ջրի և աստվածների միջև: Աստվածաշունչը հաճախ է օգտագործում այս նկարագրությունը բնութագրելու ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Հոր 41:1, Սաղմ. 74:12-17, Եսայի 27:1): ՅԱՀՎԵՆ վերահսկում է Լևիթանին Հոր 3:8, Սաղմ. 104:26-ում: Սակայն նկատեք նաև, որ «ծովը» անձնավորված է Սաղմ. 114:3,5-ում (բնության մյուս երևույթների հետ միասին):

Սակայն Սաղմ. 114:8-ում սահմանվում է ջրի կենսատու առանձնահատկությունը: ՅԱՀՎԵՆ է, և ոչ թե *Բահադր*, պտղաբերության աղբյուրը (այսինքն՝ անձրևը):

Ինչ-որ իմաստով ջրի և ցամաքի բաժանման այս նկարագրությունը ՀՄԱ-ի ակնարկ է սկզբնական ստեղծագործությանը: Ֆիզիկական ստեղծագործության նպատակը մարդկանց արարումն էր, որպեսզի փոխհարաբերվեն Աստծո հետ (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼԵՎԻԱԹԱՆ

114:3 «Ծովը տեսավ ու փախավ» Հնարավոր է սա նկատի է ունեցել՝

1. «Կարմիր Ծովից» անցնելը (բառացի՝ «եղեգների ծով», տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՐՄԻՐ ԾՈՎ), որը նկարագրվում է Ելից 14-ում և Մովսեսի պոեմի մեջ՝ Ելից 15-ում. Աստված արեց դա՝
ա. Մովսեսի գավազանի միջոցով
բ. արևելքից փչող սաստիկ քամու միջոցով
2. Հորդանան գետի հատումով՝ ջրհեղեղների շրջանում (տես՝ Հեսու 3), տես ամբողջական բացատրական գրառումները Հեսու 3-ում՝ առցանց տարբերակով. Աստված արեց դա գետի մի կողմում ջուրը դեզի պես հավաքելով, որը սկսվեց ստույգ ժամանակին և ավարտվեց ստույգ պահին:

114:4,6 Քանանի տոպոգրաֆիական երևույթները ուրախանում են ՅԱՀՎԵԻ և Նրա ժողովրդի գալուստյամբ (տես՝ Սաղմ. 96:9): Սա ներկայացված է *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ տեսքով, «դողդողալ» (BDB 296, KB 297), որը մատնանշում է՝

1. սարսափով դողալ (տես՝ 1 Մնաց. 16:30)
2. ցնծությամբ պարել (տես՝ Սաղմ. 87:7, 96:9)

114:4 «Լեռները» Սա հնարավոր է նկատի ունի Սինա լեռը, սակայն հավանական է Քանանի «լեռները» (այսինքն՝ բլուրները):

114:6 Նկատե՛ք, որ այս համարը կրկնում է Սաղմ. 114:4-ի ԲԱՅԸ:

1. ցատկոտել, Սաղմ. 114:4 – *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. ցատկոտել, Սաղմ. 114:6 – *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Սաղմոս 114:5-6 հարցնում է, թե «ինչու» է բնությունը այդպես տարօրինակ պահում իրեն: Պատճառը Արարչի ներկայությունն է: Այն ինչ պատահեց Աստծո ժողովրդի սկզբի հետ, դեռևս ունի շարունակություն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 114:7-8

⁷Դողդողա՛, ո՛վ երկիր, ՏԻՐՈՋ ներկայությունից՝

Հակոբի Աստծո ներկայությունից,

⁸Ով վեմը ջրերի ավազանի փոխարկեց,

Իսկ ապառաժը՝ ջրերի աղբյուրի:

114:7 Երկիրը ֆիզիկապես ցնցվում է Արարչի մոտեցումից:

Ուշադրություն դարձրեք, որ այստեղ Նա կոչվում է «Տեր» (*Adon*), ոչ թե «Տեր» (ՅԱՀՎԵ), ինչպես Սաղմ. 114:7ա-ում և *Eymah*՝ 114:7բ-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐ (*Adon* և *Kurios*)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ., Դ.

114:8 Այս համարը ակնարկում է անապատի դեգերումների շրջանում երկու հատուկ դեպք, որտեղ ՅԱՀՎԵՆ գերբնական կերպով ապահովում է կենսատու ջուր (տես՝ Սաղմ. 78:15, 105:41):

1. Ելից 17:6

2. Թվոց 20:11

Այն կիրառվում է նկարագրելու Եսայի 48:21-ի եսկատոլոգիական շրջանը (այսինքն՝ երկրորդ ելից):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Իսրայելի պատմության ո՞ր պատմական շրջանին է վերաբերում այս Սաղմոսը:

2. Ո՞րն է անձնավորված բնության աստվածաբանական նպատակը:

3. Ինչո՞ւ է այդքան կարևոր ջրի վրա Աստծո վերահսկողությունը:

4. Ինչպե՞ս է «դողդողալ» բառի երկու նշանակությունը օգնում մեզ հասկանալու այս Սաղմոսը: